



Consulting&Audit

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ
ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2020թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8

«ԷՅՎԻՍԻ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ



Consulting&Audit

ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն, 10 փող, տուն 6

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Հեռ: (010) 57 28 46

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,

ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ - 02.08.2006թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱԳՎՈՐԴՆԵՐԻ ՊԱՆԱՏ» ՀՎ ԱՆԴԱՄ, ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ 1 20 0440

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին և Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԻ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազմեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե չիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խեղամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել չիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել չիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանման ուղղված միջոցառումների վերաբերյալ:

07 մայիսի 2021թ.

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր՝



Մերա Պետրոսյան

Արտիմեն Արարյան

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019 դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1 312 735	1 229 423
Ոչ նյութական ակտիվներ	5	11 080	12 430
Ներդրումներ		1 500	-
Երկարաժամկետ ավանդներ	6	250 000	193 173
Հետաձգված հարկային ակտիվներ	11	12 310	18 676
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		1 587 625	1 453 702
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	84 976	79 965
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	261 056	214 283
Կարճաժամկետ ավանդներ	6	-	90 000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	297 413	250 450
Այլ ընթացիկ ակտիվներ		1 727	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		645 172	634 698
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		2 232 797	2 088 400
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Վերագնահատման պահուստ		40 254	40 254
Զբաղիված շահույթ (չձեռքարկված վնաս)		845 670	809 606
Սեփական կապիտալի այլ տարրեր		35 005	35 005
Ընդամենը սեփական կապիտալ		920 929	884 865
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	937 453	243 581
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	222	590 758
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		937 675	834 339
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	310 103	342 331
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	63 974	26 865
Այլ ընթացիկ պարտավորություններ		116	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		374 193	369 196
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		2 232 797	2 088 400

ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գլխավոր հաշվապահ՝

Բ. Հարությունյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2021թ. մայիսի 5-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 8-32)

**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծառունակվող գործունեություն			
Հասույթ	13	1 927 518	1 934 754
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	13	(1 951 847)	(1 933 022)
Համախառն շահույթ (վնաս)		(24 329)	1 732
Այլ եկամուտներ	14	6 734	101
Այլ ծախսեր	14	(7 755)	(32 765)
Ֆինանսական եկամուտներ	15	21 114	20 293
Ֆինանսական ծախսեր			
Այլ օգուտ (կորուստ)	16	(2 429)	618
Զուտ շահույթ (վնաս) մինչև հարկումը		(6 665)	(10 021)
Շահութահարկի գծով ծախս	17	(22 126)	(7 039)
Ծառունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		(28 791)	(17 060)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(28 791)	(17 060)

Ռեկտոր՝

Ե. Վարդանյան



Գլխավոր հաշվապահ՝

Ք. Հարությունյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընդգեղցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (ԼՂ 8-32)

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Կուտակված արդյունք	Վերագնա- հատման պահուստ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	826 666	40 254	35 005	901 925
Շարունակվող գործունեությունից գուտ շահույթ (վնաս)	(17 060)	-	-	(17 060)
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	-	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	809 606	40 254	35 005	884 865
Շարունակվող գործունեությունից գուտ շահույթ (վնաս)	(28 791)	-	-	(28 791)
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	64 855	-	-	64 855
Բաժնետերերի հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	-	-	-	-
Շահաբաժիններ	-	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	845 670	40 254	35 005	920 929



Գլխավոր հաշվապահ՝

Ք. Հարությունյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 8-32)

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը
Գործառնական գործունեությունից դրամական
միջոցների հոսքեր
Տարվա արդյունք

240 450

158 660

(28 791)

(17 060)

Ճշգրտումներ՝

Մաշվածություն և ամորտիզացիա

172 346

(172 650)

Հիմնական միջոցներ օտարումից (օգուտ) վնաս

(21 114)

20 293

Ֆինանսական եկամուտ

-

-

Ֆինանսական ծախս

22 126

(7 039)

Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

(203 999)

(469 308)

Ընդհանրից եկամուտ

2 244

(2 382)

Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս

Գործառնական արդյունք՝ նախքան շրջանառու
կապիտալի փոփոխությունները

(57 188)

(648 146)

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն

(46 773)

(16 857)

Պաշարների փոփոխություն

(5 011)

(7 567)

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի
փոփոխություն

(16 095)

(10 172)

Պահուստների փոփոխություն

(16 133)

1 362

Գործառնական գործունեությունից դրամական
միջոցների հոսքեր

(141 200)

(681 380)

Վնարված շահութահարկ

(2 439)

(40 318)

Գործառնական գործունեությունից դրամական
միջոցների գուտ հոսքեր

(143 639)

(721 698)

Ներդրումային գործունեությունից դրամական
միջոցների հոսքեր

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների
ձեռքբերում

(134 976)

44 473

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների
վաճառքից (օտարումից) մուտքեր

21 114

19 962

Ստացված տոկոսներ

(33 173)

283 173

Ավանդներ

Ներդրումային գործունեությունից դրամական
միջոցների գուտ հոսքեր

(147 035)

347 608

Ֆինանսավորման գործունեությունից դրամական
միջոցների հոսքեր

339 881

468 262

Ընդհանրից մուտքեր

Ֆինանսավորման գործունեությունից դրամական
միջոցների գուտ հոսքեր

339 881

468 262

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ
(նվազում)/աճ

49 207

94 172

Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը
դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա

(2 244)

(2 382)

Դրամական միջոցների տարեկան մնացորդը

297 413

250 450

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ՝

Ե. Ասրուբյան

Ք. Հարությունյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 8-32)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամը

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է ՀՀ Կառավարության 2014թ. հունվարի 23-ի N 80-Ն որոշմամբ: Հիմնադրամը ստեղծվել է «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Համալսարանը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական ոչ առևտրային՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ու գիտամշակութային կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ իրեն ամրագրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ ու պարտականություններ: Համալսարանը կարող է իր գործունեության նպատակներին համապատասխան իրականացնել ուսումնական, գիտահետազոտական, խորհրդատվական, փորձագիտական, գիտաարտադրական (նախագծային, տեխնոլոգիական, փորձարարարարտադրական) վճարովի ծառայություններ և ուսուցում՝ օրենքով ու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հիմնադրամի կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից՝ 2014թ. ապրիլի 29-ին, գրանցման համար 222.160.811 876, հարկ վճարողի հաշվառման համար /ՀՎՀՀ/-ն է՝ 01506385:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է ք. Երևան, Տեղյան 105:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

✚ Հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ), որը ստեղծվում է 5 տարի ժամկետով և բաղկացած է 31 անդամից:

✚ Հիմնադրամի տնօրենը (Տնօրեն):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը կազմել է 816 մարդ, 2019թ.-ին՝ 829 մարդ:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐԶՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

No	Անուն Ազգանուն	Պաշտոն
1.	Վլադ Ասատրյան	Խորհրդի անդամ «Կամուրջին» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ (համաձայնությամբ)
2.	Նարինե Խաչատուրյան	Խորհրդի անդամ
3.	Բազրատ Բադալյան	Խորհրդի անդամ ՀՀ Փոխվարչապետի գրասենյակի ղեկավար
4.	Գոհար Մամիկոնյան	Խորհրդի անդամ, ՀՀԿԳՄՍ նախարարի խորհրդական
5.	Նշան Մարտիրոսյան	Խորհրդի անդամ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ
6.	Արթուր Մեսչյան	Խորհրդի անդամ, Երևանի գլխավոր ճարտարապետ (համաձայնությամբ)

7.	Արմեն Ավետիսյան	Խորհրդի անդամ, ՀՀԿԳՄՍ նախարարության կազմակերպատնտեսական վարչության պետ
8.	Սուրեն Թովմասյան	Խորհրդի անդամ ՀՀ կադաստրի կոմիտեի նախագահ
9.	Էդգար Ալեքսանյան	Խորհրդի անդամ, ՀՀԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետքուհական մասնագիտական վարչության քաղաքականության մշակման բաժնի պետ
10.	Նանար Քալանթարյան	Խորհրդի անդամ, ՀՀԿԳՄՍ նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատող, վերականգնող ճարտարապետ
11.	Մհեր Մարկոսյան	Խորհրդի անդամ «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
12.	Սամվել Վարդանյան	Խորհրդի անդամ «Եղվարդշին» ԲԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
13.	Մեյրան Արիստակեսյան	Խորհրդի անդամ «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
14.	Մկրտիչ Մինասյան	Խորհրդի անդամ, Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահ
15.	Գեղամ Բարսեղյան	Խորհրդի անդամ, «Բարսիս» ՍՊԸ-ի նախագահ
16.	Արամ Դանիելյան	Խորհրդի անդամ, Հայաստանի նկարիչների միության անդամ
17.	Արտաշես Մելիքյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի ամբիոնի վարիչ
18.	Սուրեն Մխիթարյան	Խորհրդի անդամ, Ծարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի վարիչ
19.	Կարեն Ռաշիդյան	Խորհրդի անդամ, Ծարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոնի վարիչ
20.	Հակոբ Գյուլգադյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Ծանապարհների և կամուրջների ամբիոնի վարիչ
21.	Հրանտ Թադևոսյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի պրոֆեսոր
22.	Վարդգես Գրիգորյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոնի վարիչ
23.	Լաուրա Խաչատուրյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Ծարտարապետության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող

24.	Հայկ Սարգսյան	Խորհրդի անդամ, ՃԾՀԱՀ, Ծինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն ամբիոնի ղեկավար
25.	Մարիամ Գրիգորյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Դիզայն ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող
26.	Մերի Թորգոմյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Դիզայն ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող
27.	Նոննա Հովհաննիսյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Դիզայն ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող
28.	Սուսաննա Հարությունյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող
29.	Անժելիկա Մանուկյան	Խորհրդի անդամ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող
30.	Վահան Միմոնյան	Խորհրդի անդամ ՃԾՀԱՀ, Ծինարարության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի ուսանող
31.	Խաչատուր Խաչատրյան	Խորհրդի անդամ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի առկա ուսուցման մագիստրատուրայի ուսանող

1.2 Հիմնական գործունեության նպատակն ու խնդիրները

Հիմնադրամի խնդիրներն են՝

- ա) բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների վերապատրաստում ու որակավորման բարձրացումը.
- բ) ճարտարապետության, շինարարության և գեոդեզիայի բնագավառներում գիտական ուսումնամեթոդական ու գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը.
- գ) կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, մասնագիտությունների ու մասնագիտացումների համակարգի մշակումը.
- դ) գիտական մշակումների տարածումն ու լուսավորչական աշխատանքների իրականացումը:

Առաջադրված խնդիրներին համապատասխան համալսարանն իրավասու է՝

- ա) որոշելու իր կառուցվածքը, կառավարման սկզբունքները, կազմելու ուսումնական պլաններ ու ծրագրեր.
- բ) ստեղծելու հոգաբարձուների խորհուրդ.
- գ) սահմանված կարգով իր կազմում ստեղծելու գիտահետազոտական ինստիտուտներ, մասնաճյուղեր, կենտրոններ, քոլեջներ, մասնագիտական թեքում ունեցող ավագ դպրոցներ.
- դ) շնորհելու համալսարանի պատվավոր կոչումներ, սահմանելու մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրելու համալսարանի մեդալով.
- ե) իր կողմից կնքված պայմանագրերի հիման վրա իրականացնելու երկկողմանի ու բազմակողմանի ուղղակի կապեր Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բուհերի, գիտական հիմնարկների, գերատեսչությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ, կատարելու տարատեսակ աշխատանքներ (կադրերի պատրաստում, ուսանողների ու ասպիրանտների ուսուցում, մասնագետների փոխանակում, գիտական, մշակութային և այլ գործունեություն, գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում, բնակչությանը վճարովի ծառայությունների մատուցում).
- զ) իրականացնելու ուսումնական, գիտահետազոտական, խորհրդատվական, փորձագիտական, նախագծային և փորձարարարատարական ու հրատարակչական գործունեություն, ինչպես նաև կազմակերպելու

ստուգատեսմրցույթներ և ցուցահանդեսներ.

է) կազմակերպելու մագիստրանտների, ասպիրանտների, դոկտորանտների և հայցողների ընդունելությունը համալսարան.

ը) օրենքով սահմանված կարգով վարձակալության հանձնելու իր գույքը.

թ) տնօրինելու իր ֆինանսական միջոցները:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<ՀՄՍԽ>) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Զափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն: Հիմնադրամը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով, երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

Համաձայն ՖՀՄՍ-ի Հիմնադրամը ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին երկու հաշվետվություն: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Հիմնադրամը ներկայացնելու է երկու համադրելի ժամանակաշրջաններ միայն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման, ֆինանսական հաշվետվություններում հոդվածների հետընթաց վերաներկայացման, կամ ֆինանսական հաշվետվություններում հոդվածների վերադասակարգման դեպքերում:

2.5 Նոր և փոփոխված ՖՀՄՍ կիրառումը

Ընթացիկ տարում Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի կողմից:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքները

Հիմնադրամը կիրառել է հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՖՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվության մեջ և ՖՀՄՍ-ներով ներկայացված իր առաջին ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում:

Կոնկրետ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության նկատմամբ կիրառվող ՖՀՄՍ-ի բացակայության դեպքում ղեկավարությունն իր դատողությունների հիման վրա ինքնուրույն մշակում է հաշվապահական հաշվառման այնպիսի քաղաքականություն, որ տեղեկատվությունը լինի՝

ա) տեղին՝ օգտագործողների կողմից տնտեսական որոշումներ ընդունելու համար,

բ) արժանահավատ այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունները՝

• ճշմարիտ ներկայացնեն Հիմնադրամի ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները և

- դրամական միջոցների հոսքերը,
- արտացոլեն գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ոչ միայն իրական ձևը, այլև դրանց տնտեսական բովանդակությունը,
- չեզոք են, այսինքն՝ կանխակալությունից զերծ,
- հաշվենկատ են,
- ամբողջական են բոլոր էական դրսևորումներում:

Այդ դատողություններն անելիս ղեկավարությունն անդրադառնում է հետևյալ հաջորդականությամբ ներկայացված աղբյուրներին՝ հաշվի առնելով դրանց կիրառման հնարավորությունը՝

ա) նման և կապակցված հարցերին առնչվող ՖՀՄՄ-ներում ներկայացված պահանջները,

բ) ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի սահմանումները, ճանաչման չափանիշները և չափման հիմունքները՝ ներկայացված «Հիմունքներում»:

Բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրսգրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցների վանառքից օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով մուտքերը հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Հիմնադրամի մտադրություններին համապատասխան:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ վերանայվում է, եթե այդ ակտիվներից սպասվող տնտեսական օգուտների ստացման ակնկալվող մոդելի մեջ տեղի է ունեցել նշանակալի փոփոխություն:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

Դասի անվանումը	Չափման հիմունքը	Օգտակար ծառայություն հարկային	Օգտակար ծառայություն ֆինանսական	Մաշվածության հաշվարկման մեթոդը
Ծեներ, շինություններ	ձեռք բերման արժեքով	20 տարի	20-25 տարի	գծային
Ուսումնական հաստատությունների շենքեր, շինություններ	ձեռք բերման արժեքով	10 տարի	10-20 տարի	գծային
Հոսքային գծեր, ռոբոտատեխնիկա	ձեռք բերման արժեքով	3 տարի	3-8 տարի	գծային
Մարքավորումներ	ձեռք բերման արժեքով	5 տարի	5-10 տարի	գծային
Հաշվողական և համակարգչային	ձեռք բերման արժեքով	1 տարի	3-5 տարի	գծային

տեխնիկա, հաղորդակցական սարքավորանք				
Տրանսպորտային միջոցներ	ձեռք բերման արժեքով	8 տարի	5-10 տարի	գծային
Գրադարանային ֆոնդ	ձեռք բերման արժեքով	8 տարի	5-10 տարի	գծային
Այլ հիմնական միջոցներ	ձեռք բերման արժեքով	8 տարի	5-10 տարի	գծային

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը գնահատված արժեք է, որը Հիմնադրամը ենթադրում է ստանալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետը լրանալուց հետո՝ ժամկետի վերջում ակնկալվող վաճառքից նվազեցնելով ակտիվի վաճառքի համար անհրաժեշտ գումարով:

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Գնահատված մնացորդային արժեքը, օգտակար ծառայության ու ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և գնահատման փոփոխությունների ազդեցությունը հաշվառվում է առաջընթաց հիմունքով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվը ամորտիզացիայի ենթակա չէ:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

համակարգչային ծրագրեր

5-10 տարի

լիցենզիաներ, վկայագրեր և արտոնագրեր

5-10 տարի

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից գուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը գնահատում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հայտանիշների առկայությունը: Նման հայտանիշների առկայության դեպքում Հիմնադրամը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը իրենից ներկայացնում է վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի հաշվեկշռային արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնը: Նյութական և ոչ նյութա

կան ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումար և արժեզրկումից վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այնքանով, որքանով այն գերազանցում է նախկին վերագնահատման հավելածը սեփական կապիտալում:

Նախկինում ակտիվի գծով ճանաչված արժեզրկման վնասը հակադարձվում է, եթե ակտիվի օգտագործման արժեքի կամ վաճառքի գուտ գնի գնահատման փոփոխություն է տեղի ունեցել: Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլիներին:

Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Երբ հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Հիմնադրամը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է ակտիվը:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվները և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է առնվազն տարեկան և ցանկացած ժամանակ, երբ կա հայտանիշ, որ այդ ակտիվը կարող է արժեզրկվել:

3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.5 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.6 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գույտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտագրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գույտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համարման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք, առաջին ելք» բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գույտ արժեք ցանկացած իջեցման գումար, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման գույտ արժեքի աճից, ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.8 Հասույթ

Հիմնադրամը պետք է ճանաչի հասույթ, երբ (կամ այնքանով, որքանով) կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ (կամ այնքանով, որքանով) կատարման պարտականությունը կատարվում է, Հիմնադրամը պետք է ճանաչի որպես հասույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը:

Գործարքի գինը որոշելիս՝ Հիմնադրամը պետք է դիտարկի պայմանագրի պայմանները և իր սովորական քիզնես գործելակերպը: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անուհից հավաքագրված գումարները:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած առևտրական գեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարները և գնահատված նվազեցումները:

3.9 Հարկեր

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասների և գեղչերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք նախատեսվում են կիրառել այն ժամանակաշրջանում, երբ ակտիվը կիրացվի կամ պարտավորությունը կմարվի՝ հիմք ընդունելով հարկերի դրույքաչափերը և հարկային օրենքները, որոնք գործում են հաշվետու ժամանակաշրջանում:

Շահույթից կամ վնասից դուրս ճանաչված հոդվածներին վերաբերող հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են՝ հիմքում ընկած գործարքներից կախված կամ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝ նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվները իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

Իրացման հարկեր (անուղղակի հարկեր)

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են գուտ իրացման հարկերից՝ բացառությամբ

(ա) երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված:

(բ) դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ

կրեդիտորական պարտք:

3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը պետք է իր ֆինանսական ակտիվներից առևտրային դեբիտորական պարտքերը չափի իրենց գործարքի գնով (ինչպես դա սահմանված է ՖՀՄՍ 09-ով), եթե դեբիտորական պարտքերը չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ:

Բացառությամբ առևտրական դեբիտորական պարտքերի, սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո Հիմնադրամը պետք է ֆինանսական ակտիվը համապատասխան չափի՝

- ա) ամորտիզացված արժեքով,
- բ) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով,
- գ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Հիմնադրամը պետք է դասակարգի բոլոր ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորությունների:

Հիմնադրամը պետք արժեզրկման պահանջները կիրառի այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, և այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

Հիմնադրամը պետք է ճանաչի կորստի պահուստ ֆինանսական ակտիվի *ակնկալվող պարտքային կորուստների* գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի *ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին համասար* գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Հիմնադրամը շահույթում կամ վնասում, որպես *արժեզրկումից օգուտ կամ կորուստ*, պետք է ճանաչի ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորստի պահուստը ճշգրտվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել սույն ստանդարտին համապատասխան:

3.11 Կանխավճարներ

Կանխավճարները հաշվեկշռում ընդգրկվում են արժեզրկման պահուստով նվազեցման արժեքով: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ այն պարագայում, երբ կանխավճարին վերաբերվող ապրանքները կամ ծառայությունները նախատեսվում է ձեռք բերել մեկ տարի հետո կամ երբ կանխավճարները վերաբերում են ակտիվներին, որոնք դասակարգվում են որպես ոչ ընթացիկ սկզբնական ճանաչման ժամանակ: Ակտիվի ձեռքբերման համար կանխավճարները հաշվեկշռում են ակտիվի հաշվեկշռային արժեքին այն ժամանակ, երբ Հիմնադրամին է անցնում ակտիվի տիրապետումը և հնարավոր է դառնում, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ: Այլ կանխավճարները դուրս են գրվում շահույթ կամ վնաս կանխավճարին վերաբերող ապրանքները կամ ծառայությունները ձեռք բերելու պահին: Եթե կան հայտանիշներ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում և համապատասխան արժեզրկման վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.12 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Հիմնադրամը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների

ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Ձեռքման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, քայք բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամոռի են գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

3.13 Ծնորհներ

Հիմնադրամը ստանդարտը կիրառում է անալոգիայով:

Ծնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ կազմակերպությունը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Ծնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Ծնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.14 Վարձակալություններ

Պայմանագրի սկզբում Հիմնադրամը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է գեղջվեն կիրառելով *վարձակալությամբ ենթադրյալ սոկոսադրույքը*, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի *վարձակալի լրացուցիչ փոխադրության սոկոսադրույքը*:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար կատարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար ցանկացած վերանայում կամ վարձակալության

վերափոխում:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը՝ կիրառելով սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելը, եթե վարձակալը չի կիրառում վերևի պարբերությամբ չափման մոդելը:

Վարձակալը կարող է ընտրել չկիրառել այդ պահանջները ստորև նշված վարձակալությունների նկատմամբ՝

ա) կարճաժամկետ վարձակալություններ, և

բ) վարձակալություններ, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է:

Կարճաժամկետ վարձակալություն.

Վարձակալություն, որի վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս:

Կարճաժամկետ վարձակալությունների կամ այն վարձակալությունների նկատմամբ, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, վարձակալը այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում պետք է ճանաչի որպես ծախս (ծախսում) կամ գծային հիմունքով կամ այլ պարբերական հիմունքով:

3.15 Սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները. կազմակերպության մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.

բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.16 Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետեւանքը պետք է ճանաչվի առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում եւ հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այն դեպքում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, ապա այն դիտվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

3.17 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Հիմնադրամը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է որեւէ ՖՀՄՄ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի եւ իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ եւ տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է որոշել կամ այդ փոփոխության ազդեցությունը կունենա

Ժամանակաշրջանի վրա, կա՛մ դրա կուտակային ազդեցությունը:

3.18 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

	Ծեփեր և շինություններ	Կառուց- վածքներ	Մեքենա – սարքա- վորումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Տնտեսական գույք, արտադրական գույք, այլ հիմնական միջոցներ	Գրադա- րանային ֆոնդ	Ընդամենը
2019թ հունվարի 1-ի դրությամբ	1 241 191	26 311	861 748	97 391	174 668	9 784	2 411 093
Ավելացումներ, ներքին շարժ	-	17 604	20 277	-	6 592	-	44 473
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	-	-	-	-	-	-
Վերագնահատում	-	-	-	-	-	-	-
2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1 241 191	43 915	882 025	97 391	181 260	9 784	2 455 566
Ավելացումներ, ներքին շարժ	7 771	-	155 894	-	7 056	-	170 721
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	-	-	-	-	(162)	(162)
Վերագնահատված հիմնական միջոցների մաշվածության դուրս գրում	-	-	-	-	-	-	-
Ավելացումներ, կապիտալացում	-	-	1 713	-	5	-	1 718
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1 248 962	43 915	1 039 632	97 391	188 321	9 622	2 627 843
Կուտակված մաշվածություն 2019թ հունվարի 1-ի դրությամբ	208 521	7 055	638 225	54 906	143 297	7 850	1 059 854
Տարվա ծախս	30 130	1 478	107 885	8 068	18 158	570	166 289
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	-	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	238 651	8 533	746 110	62 974	161 455	8 420	1 226 143
Տարվա ծախս, ներքին շարժ	19 926	1 305	58 804	4 107	4 737	248	89 127
Օտարումներ, դուրս գրումներ, ներքին շարժ	-	-	-	-	-	(162)	(162)
Վերագնահատված հիմնական միջոցների մաշվածության դուրս գրում	-	-	-	-	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	258 577	9 838	804 914	67 081	166 192	8 506	1 315 108
Զուտ հաշվեկշռային պոմեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1 002 540	35 382	135 915	34 417	19 805	1 364	1 229 423
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	990 385	34 077	234 718	30 310	22 129	1 116	1 312 735

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

5. Այլույթական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ, վկայագրեր և արտոնագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	16 618	11 701	28 319
Ավելացումներ	-	-	-
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	16 618	11 701	28 319
Ավելացումներ	580	535	1 115
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17 198	12 236	29 434
Կուտակված մաշվածություն			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	4 038	7 685	11 723
Տարվա ծախս	2 231	2 072	4 303
Նվազեցումներ	(137)	-	(137)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6 132	9 757	15 889
Տարվա ծախս	1 416	1 049	2 465
Նվազեցումներ	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7 548	10 806	18 354
Զուտ հաշվեկշռային արժեք			
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10 486	1 944	12 430
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9 650	1 430	11 080

6. Ավանդներ

Հազար ՀՀ դրամ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	143 538	160 000	303 538
Ավելացում	49 635	180 000	229 635
Պակասեցում	-	250 000	250 000
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	193 173	90 000	283 173
Ավելացում	200 000	-	200 000
Պակասեցում	143 173	90 000	233 173
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	250 000	-	250 000

Հիմնադրամն իր ժամանակավոր ազատ դրամական միջոցները տեղաբաշխել է որպես բանկային ավանդներ: Ոչ ընթացիկ մասում ներկայացված են Հիմնադրամի երկարաժամկետ ավանդները, որոնք դրամային ավանդներ են՝ ներդրված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում:

7. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	33 245	30 075
Վառելիք	1 368	598
Պահեստամասեր	5 643	5 522
Ծինանյութ	4 950	2 222
Ապրանքներ	2 885	2 776
Այլ	36 885	38 772
	84 976	79 965

2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ:

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	179 563	133 430
Տրված ընթացիկ կանխավճարներ	2 280	1 832
Դեբիտորական պարտքեր բյուջեին	8 131	78 769
Դեբիտորական պարտքեր բյուջեին այլ պարտադիր վճարների գծով	-	-
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր	71 082	252
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	261 056	214 283

Հիմնադրամի դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2020թ կազմել է 30 օր, իսկ 2019թ՝ 28 օր: Առևտրային դեբիտորական պարտքերից գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օրը, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի: 31.12.2020թ. և 31.12.2019թ դրությամբ Հիմնադրամը պահուստափոնդ չի ունեցել:

9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ՝ դրամային	253 180	182 911
Բանկային հաշիվներ՝ արտարժույթային	44 233	67 539
	297 413	250 450

Հիմնադրամը Կրեդիտ-Երևան բանկում ունեցել է հաշվարկային հաշիվներ՝ 13 956,0 հազ. դրամ ընդհանուր գումարով: Կրեդիտ-Երևան բանկն այս պահին գտնվում է լուծարման գործընթացում:

10. Ճնդրիներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
Հունվարի 1-ի դրությամբ	243 581	315 989
ՀՄ-ների շեղումների վերադասակարգում	583 019	
Տարվա ընթացքում ստացված	145 050	4 720
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(33 954)	(77 128)
Փոխարժեքային տարբերություններ	(243)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	937 453	243 581

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հունվարի 1-ի դրությամբ	10 454
Տարվա ընթացքում ստացված	468 263
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(451 232)
Հետ վերադարձված	-
Տեղափոխում ակտիվներին վերաբ. շնորհներ	-
Ներքին շարժ, փոխարժեքային տարբ.-ն	(620)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	26 865

Ստորև ներկայացված է Հիմնադրամի կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերը.

Հազար ՀՀ դրամ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
"ERASMUS+IACOBUS" ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	5 198
"ERASMUS+InnoCENS" ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	10 006
ERASMUS+AI4R&D ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	10 753
ERASMUS+ HERITAG ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	-
2 871	-
"George-August-Universitat Gottingen" ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	4 720
"LABORATOIRE DE CONSERVATION REST"	-
ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	1 343
1 282	-
"Liepaja University Latvia ERASMUS FLEX WBL"	-
ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	-
1 088	-
"SEUՊՈԼԻՍ GOVERN" ծրագրի շրջանակներում ստացված շնորհներ	523
Պետության կողմից տրված շնորհներ և փոխհատուցումներ	439 190
279 869	-
Այլ	1 250
2 077	-
287 186	472 983

11. Հետաձգված հարկեր

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար ՀՀ դրամ

Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Չուս հետաձգված հարկ	
2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ.	2019թ.
-	-	222	590 758	(222)	(590 758)
-	1 500	-	-	-	1 500
12 310	17 176	-	-	12 310	17 176

12 310	18 676	222	590 758	12 088	(572 082)
--------	--------	-----	---------	--------	-----------

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հազար ՀՀ դրամ	2019թ հունվարի 1-ի դրությամբ	Շահույթ/ վնասում ճանաչված	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթ/ վնասում ճանաչված	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցներ	(605 493)	14 735	(590 758)	590 536	(222)
Մկզբնական արժեքով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կազմ- ների բաժնային գործիքներում	-	-	1 500	(1 500)	-
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	17 176	-	17 176	(4 866)	12 310
Զուտ հետաձգված հարկ	(588 317)	14 735	(572 082)	584 170	12 088

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4 145	5 126
Ստացված կանխավճարներ ուսման վարձերի գծով	207 997	198 870
Այլ ստացված կանխավճարներ	7 021	-
Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	21 564	53 324
Հատուցումներ աշխատակիցներին	21	40
Զօգտագործած արձակուրդի գծով պահուստ	68 387	84 520
Այլ	968	451
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	310 103	342 331

Հիմնադրամի կրեդիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2020թ կազմել է 1 օր, 2019թ.՝ 1 օր:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Հարկերի և այլ պարտադիր վճարների գծով կրեդիտորական պարտքը բաղկացած է հետևյալից՝

Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկ	20 448	5 626
Եկամտային հարկ	78	40 586
Ավելացված արժեքի հարկ	825	6 718
Գույքահարկ	38	38
Հողի հարկ	170	356
Այլ	5	-
	21 564	53 324

13. Եկամուտներ, ծախսեր

Եկամուտներ

Հազար ՀՀ դրամ

Ուսումնական գործունեությունից եկամուտներ
Ակտիվներին վերաբերող շնորհներից
Եկամուտներին վերաբերող շնորհներից՝
գիտություն
Ծառայությունների մատուցումից եկամուտ
Լրացուցիչ կողությունից և այլ ուսումնական
վճարներից եկամուտ
Այլ եկամուտներ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

1 652 844

1 596 939

33 954

94 503

157 142

68 660

82 289

164 838

1 001

2 908

288

6 906

1 927 518

1 934 754

Ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Ուսումնական գործունեությունից ծախսեր,
այդ թվում՝

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

1 692 069

1 838 519

ԱՎՈՒՄ

1 418 179

666 735

Վաճառված ապրանքների, մատուցված

ծառայությունների ինքնարժեք

1 609

871 697

Մարկետինգի և գովազդի ծախսեր

1 137

2 282

Ուսման գեղջեր

83 729

48 764

ՀՄ-ների և ՈՆԱ-ների Մաշվածության ծախսեր

126 450

78 147

ՀՄ-ների և ՈՆԱ-ների վրա կատարված ընթացիկ
ծախսեր

3 181

Գործուղման և ներկայացուցչական ծախսեր

1 795

36 269

Գրասենյակային և կոմունալ ծախսեր

35 498

65 744

Առողիտորական և խորհրդատվական ծախսեր

2 880

Բանկային և ապահովագրական

ծառայությունների ծախսեր

467

534

Չփոխհատուցվող ծախսեր

427

168

Այլ ծախսեր

16 717

68 179

Ակտիվներին վերաբերող շնորհների գծով
ծախսեր, այդ թվում՝

33 954

94 503

ՀՄ-ի մաշվածություն ծախսեր /ակտիվներին
վերաբերող շնորհների շրջանակում/

33 954

94 503

Եկամուտներին վերաբերող շնորհներից
ծախսեր /գիտություն/ այդ թվում՝

157 142

ԱՎՈՒՄ

150 807

Գրասենյակային և այլ ծախսեր

6 335

Մատուցված ծառայությունների ինքնարժեք՝
եկամտային պայմ-ից

68 166

ԱՎՈՒՄ

59 929

Այլ ծախսեր

8 237

Այլ ծախսեր

516

1 951 847

1 933 022

14. Այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ

Տույժերից, տուգանքներից, նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ
ՀՄ-ների շեղումներից եկամուտներ
Այլ եկամուտներ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
626	70
4 704	
1 404	31
6 734	101

Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր
Գործառնական այլ ծախսեր
Այլ ծախսեր

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
823	2 383
6 932	16 323
	14 059
7 755	32 765

15. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր

Ֆինանսական եկամուտներ

Հազար ՀՀ դրամ

Կարճաժամկետ բանկային ավանդներից տոկոսային եկամուտ
Շահաբաժնից եկամուտ
Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
21 114	17 038
	90
	3 165
21 114	20 293

16. Այլ օգուտ (կորուստ)

Հազար ՀՀ դրամ

Օգուտ արտարժույթի փոխարժեքային տարբերություններից
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտներ
Օգուտ նվիրատվություններից,
դրամահավաքներից
Ստացված կրթաթոշակներից եկամուտներ

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
9 994	1 086
10 826	-
18 188	-
28 692	33 709
67 700	34 795

Հազար ՀՀ դրամ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

Կորուստ արտարժույթի փոխարժեքային
տարբերություններից

12 238

3 468

Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր
Եկամուտներին վերաբերող շնորհների գծով
ծախսեր

20 723

8 475

Պետբյուջեից ստացված կրթաթոշակների գծով
ծախսեր

28 693

30 709

Այլ ծախսեր

70 129

34 177

Զուտ օգուտ(կորուստ)

(2 429)

618

17. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

Հազար ՀՀ դրամ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

2019թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարի

Ընթացիկ շահութահարկ՝

Ընթացիկ շահութահարկի գծով ծախս

(17 260)

(5 035)

Հետաձգված հարկեր

Ժամանակային տարբերությունների ծագում և
հակադարձում

(4 866)

(2 004)

**Համապարփակ ֆինանսական արդյունքների
մասին հաշվետվությունում ներկայացված
շահութահարկի գծով ծախս / (օգուտ)**

(22 126)

(7 039)

18. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամուտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին:

Ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

2020թ. դեկտեմբերի
31-ի դրությամբ

2019թ. դեկտեմբերի
31-ի դրությամբ

Մնացորդներ դրամարկղում և բանկերում

297 413

250 450

Դեբիտորական պարտք վաճառքների գծով

179 563

133 430

Ֆինանսական ներդրումներ

250 000

283 173

726 976

667 053

Ֆինանսական պարտավորություններ

	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4 145	5 126
	4 145	5 126

19. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնելիս ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույթային ռիսկերի փոփոխությունների, ինչպես նաև գնային ռիսկի ազդեցությանը:

բ) Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կախված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների և ձեռքբերումների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են ԱՄՆ դոլարը և Եվրոն: Հաշվետու ժամանակաշրջանում արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժույթային ռիսկի, էական չեն:

գ) Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում բանկային ավանդների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույթով պարտք) կամ դրամական միջոցների սպազա հոսքերը: Դեկլավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույթների նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական գործիքի առումով դեկլավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույթներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը չունի տոկոսադրույթի ռիսկ ձևավորող ֆինանսական պարտավորություններ, չի հաշվառում ֆիքսված տոկոսադրույթով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես նաև չի նախատեսում ածանցյալ գործիքները (տոկոսադրույթի օփիոններ) որպես հեջավորման գործիքներ՝ իրական արժեքի հեջի հաշվառման մոդելի շրջանակներում: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույթների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի վրա:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի գծով և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով: Հիմնադրամը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկի նշանակալի կետորոնացում չկա:

Ֆինանսական նկղդումներ

Հիմնադրամը սահմանափակվում է իր վարկային ռիսկը՝ ներդրումներ կատարելով միայն բանկային ավանդներում:

Ելակետային արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

20. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

- ✚ Ծանոթագրություն 4 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը
- ✚ Ծանոթագրություն 5 – Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ
- ✚ Ծանոթագրություն 11 – հետաձգված հարկեր

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական ալի աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում:

- ✚ Ծանոթագրություն 22 – պայմանականություններ

21. Պարտավորվածություններ

Լարձակարության գծով պարտավորվածություններ

Հիմնադրամը որպես վարձատու

Հիմնադրամը Հայրիզնեսթանի թույլատրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող ք.Երևան, Տերյան 105 հասցեում օգտագործել 2 /երկու/ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով գրասենյակային տարածք՝ այնտեղ ԱԳՓՄ շահագործելու նպատակով: Պայմանագրերը կարող են չեղյալ համարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

22. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրությունից, այլ տեսակի /իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից՝ հասցված վնասից/ ապահովագրական պայմանագրեր չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Հիմնադրամը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Հիմնադրամի գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն

գործարքների և գործնեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Հիմնադրամի ղեկավարության կարծիքով 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը պատշաճ կերպով է կատարել ՀՀ հարկային օրենսգրքի պահանջները և Հիմնադրամի հարկային, արժույթային և մաքսային դրույթունը կայուն է:

Դատական վարույթներ

Հիմնադրամը ներգրավված չէ դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

23. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Հիմնադրամի կապակցված կողմերն են հանդիսանում՝ Հիմնադրամի հիմնադիրը, հոգաբարձուների խորհրդի անդամները, ղեկավար անձնակազմը:

N	Փոխկապակցված ան	Փոխկապակցված անի պաշտոնը/կապը	Կրեդիտ- րական / դեբիտ- այարար պարտա- գումար ների գծով առ 31/12/19	Ստաց- ված փոխա- տույցուն եր	Մարված փոխա- տույցուններ	Կրեդիտ- րական / դեբիտ- այարար պարտա- գումարներ ի գծով առ 31/12/20	Աշխա- տակարձ	Ծառայա- թյան գումար 01/01/20- 31/12/20 Ժամանա- կաշրջան վաճառ	Վաճառք 01/01/20- 31/12/20 Ժամանա- կաշրջան վաճառ	Կրեդիտ- րական առաջնություն / կոնկրետ դեբիտային պարտա- գումար առ 31/12/20-ի դրությամբ	Վարձակա- րության գծով դեբիտային պարտա- գումար առ 31/12/20-ի դրությամբ	Կրեդիտ րական / դեբիտային պարտա- գումարներ ի գծով առ 31/12/19	Ստաց- ված կրթա- թույլակ- ներ	Մարվ ած կրթա- թույլակ ներ	Կրեդիտ- րական / դեբիտ- այարար պարտա- գումարներ ի գծով առ 31/12/20
1	Հայաստանի Հանրապետություն	100% սեփականատեր	- 12 128	55 048	57 782	- 9 394	12 126,50		460 170,00	(72,71)	612,80	- 7 840	21 898	29 392	- 347
2	Վարդանիշ Երկաթուղի	Ուկրաինա													
3	Մարեն Թովմատյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					1 269,38								
4	Մկրտիչ Միսայան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					1 361,32								
5	Մինո Մարկոսյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					4 770,04								
6	Արաշես Մելիքյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					5 639,73								
7	Կարեն Ռաֆիկյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					7 261,66								
8	Հանրապետական Գյուղատնտեսական Կոոպերատիվ	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					4 795,15								
9	Հայկ Սարգսյան աշխատակից ԱԶ Հայկ Սարգսյան /ՀՀՀՀ 85134321/	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					5 287,11	171,00	958,76	(175,00)					
10	Համետ Թադևոսյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					2 659,95								
11	Մարեն Միսայան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					4 111,57								
12	Վարդան Գրիգորյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ					5 396,09								
13	Լուսինա Խաչատրյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ								(220,00)					
14	Մարինա Գրիգորյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ								(110,40)					
15	Մարին Թադևոսյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ								(50,40)					
16	Մուսաննա Հարությունյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ								(65,52)					

24. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո (31.12.2020թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը՝ (05.05.2021թ.) ճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

Կորոնավիրուսային համավարակի /COVID-19/ զարգացումների մասշտաբը և տևողությունը մնում են անորոշ և դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի վրա: Հիմնադրամն այս համավարակը համարում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող իրադարձություն, որի ֆինանսական ազդեցությունը ներկայումս չի կարող գնահատվել վատահոսության բավարար մակարդակով:

Ռեկտոր՝

Ե. Վարդանյան



Գլխավոր հաշվապահ՝

Ք. Հարությունյան